«Թող Տիրամայրը քաղցրությամբ լսի
աղոթքը նրա,
Որպես պատարագ հացի ու գինվո»:

Ավելացնենք, որ հրատարակությունը իրականացված է մեծ ճաշակով և բարեխղճությամբ: Գրքին յուրահատուկ հմայք են տալիս Հովնաթանյան դպրոցի և հայ անհայտ նկարիչների Տիրամորը նվիրված բարձրաճաշակ և խորապես հայկական գեղանկարները:

Մնում է հուսալ, որ հայր Ասողիկի հոգու արձագանքը կհարատևի, հետզհետե կընդլայնվեն, կզգենու առավել կայուն գեղագիտական խորք և մտածումի պայծառություն:

Արտատպում ենք «Մայր մեր», «Եթե», «Բոլոր մայրերը կույս են» և «Մայր խաղաղության» քերթվածները առ ի ծանոթություն և սպասում Ասողիկ աբեղա Արիստակեսյանի նոր գրքերի:

ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

ՄԱՅՐ ՄԵՐ

Մայր մեր
Որ հերկինս,
Որ երկնի բուրյան ծաղիկն ես արթուն,
Կապույտ խորանի լույսը շողակաթ,
Բարեխոս եղեր
Մեր հոգիներին՝ հոգով քո խնդուն:

Մայր մեր
Որ հերկինս,
Ամենազեղուն շունչդ տարածիր
Մեր երկրի վրա մեղմ ու հոգեթով,
Փարվիր աշխարհին
Քո հոգով անծիր
Եվ անցիր խաղաղ
Տնե-տուն հերթով:

Անցիր տնե-տուն և ափի՜ր շուայլ,
Բարության շողը հույսերով լեցուն,
Որ կյանքում վշտոտ սրտերը մուայլ՝
Պայծառանալով դառնան զվարթուն:

Մայր մեր
Որ հերկինս,
Կարճիր սահմանը հեռավորության
Երկրի ու երկնի...,
Փրկության համար
Քո որդիների...:

«ԲՈԼՈՐ ՄԱՅՐԵՐԸ ԿՈՒՅՍ ԵՆ...»

Բոլոր մայրերը կույս են...
Վազգեն Կաթողիկոս

Բոլոր մայրերը կույս են աշխարհում,
Աշխարհի բոլոր մայրերն հավասար,
Երբ որ մանուկ են լույս աշխարհ բերում,
Իրենց խորանից՝ սիրով սրբարար:

Հղի՛ օրհնությամբ Սուրբ Աստվածամոր,
Լեցո՛ւն բարության շողերով անհուն,
Նրանք աղոթք են հյուսում ամեն օր
Ու խունկ են ծխում ամեն իրիկուն:

Ու երազներ են պարգևում կյանքին,
Աստուծո սրբազան տաճարի խորքում,
Որ կյանքը երբեք չդառնա՛ ունայն
Ու լույսը հանգի մեղմորեն տրտում:

Նրա՞նք են, նրա՞նք, պարգևում մեզ սեր,
Ու վառում կյանքում կանթեղը լուսո,
Որ ոչ ոք կյանքում չմնա անսեր,
Չմնա կարոտ օրհնությանն Աստուծո:

Այդ նրանք են, որ կսկիծ ու հառաչ
Փոխում են լույսի իրենց աղոթքով,
Աստվածամորն են ելնում ընդառաջ
Ու փրկում կյանքը սուրբ արցունքներով:

Բոլոր մայրերը կույս են աշխարհում,
Աշխարհի բոլոր մայրերն հավասար,
Երբ որ մանուկ են լույս աշխարհ բերում,
Իրենց խորանից՝ սիրով սրբարար:

ՄԱՅՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Խնկյալ դաշտերից կապույտ երկնային
Հղի՛ր մեզ ողջույն ու հոգիր օրհնանք,
Լի խաղաղության շողերով թովիչ,
Լեցուն շողերով քո վառ խնդության:

Հղի՛ր մեզ վրա շունչդ հուսաձին,
Ծաղկյալ, խնկահոտ երկնային հովտում,
Տո՛ւր խաղաղություն մեր տենչանքներին,
Գթա՛ քո սիրով, շնորհի՛ր ներում...

Մա՞յր խաղաղության, օրհնյա՞լ ու անգին,
Տարածի՛ր լույսը քո խաղաղության,
Մեր թույլ սրտերին անսուրբ, տրտմագին,
Որ ապրենք քո սուրբ շունչով հարության: